ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/258

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ
Մասնակից՝ «Հովսեփյան Սուսաննա» Ֆ/Ա

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/13» ծածկագրով գնանշման հարցում, մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16729-2020 գրությամբ «Հովսեփյան Սուսաննա» Ֆ/Ա-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 02.11.2020թ.-ի թիվ 01-11/20-Ն գրության հիման վրա, 06.11.2020թ.-ին «Հովսեփյան Սուսաննա» Ֆ/Ա-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 06.11.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 06.11.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/258 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 23.11.2020թ.-ին:

2. <u>«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը 02.11.2020թ.-ի թիվ 01-11/20-Ն գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Համաձայն ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջների, տեղեկացնում եմ, որ «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/13 ծածկագրով 21.10.2020թ.-ին Մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններ (Ֆեյսբուքյան էջի առաջխաղացում) ձեռքբերման նպատակով հայտարարվել է գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցած Ֆ/Ա Հովսեփյան Սուսաննայի (այսուհետ՝ Մասնակից) ներկայացրած հայտի փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություն՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ փաստաթղթերի վրա գրված չէին բնօրինակ և պատճեն բառերը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել՝ առաջարկելով Ֆ/Ա Հովսեփյան Սոաաննային մեկ

աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, սակայն Ֆ/Ա Հովսեփյան Սուսաննան դիմում-հայտարարությամբ հրաժարվել է մրցույթի հետագա մասնակցությունից՝ երկրում ստեղծված պատերազմական և կորոնավիրուսային իրավիճակից ելնելով:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի գ/ենթակետը, դիմում եմ Ձեզ Ֆ/Ա Հովսեփյան Սուսաննային գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ գործընթաց նախաձեռնելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/13» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Հովսեփյան Սուսաննա» Ֆ/Ա-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Հովսեփյան Սուսաննա» Ֆ/Ա-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 06.11.2020թ.-ին գրությամբ դիմել է «Հովսեփյան Սուսաննա» Ֆ/Ա-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16729-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով 26.11.2020թ.-ին հրավիրված նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2020/258 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների ձեռքբերման նպատակով 21.10.2020թ.-ին հայտարարվել է «ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-

20/13» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 28.10.2020թ.-ին հայտ է ներկայացրել նաև «Հովսեփյան Սուսաննա» Ֆ/Ա-ն:

ii. «Հովսեփյան Սուսաննա» Ֆ/Ա-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 28.10.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Հովսեփյան Սուսաննա» Ֆ/Ա-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ փաստաթղթերի վրա գրված չեն եղել բնօրինակ և պատճեն բառերը:

iv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

v. «Հովսեփյան Սուսաննա» Ֆ/Ա-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ երկրում ստեղծված պատերազմական և համաճարաքային իրավիճակը խոչնդոտում է աշխատանքների հարթ իրականացմանը, ոստի տեղեկացրել է, որ հրաժարվում է ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/13 ծածկագրով ընթացակարգի հետագա մասնակցությունից:

vi. Հանձնաժողովի 28.10.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել մասնակցի հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16729-2020 գրությամբ «Հովսեփյան Սուսաննա» Ֆ/Ա-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հովսեփյան Սուսաննա» Ֆ/Ա-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/13» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 1-ին չափաբաժնին և Հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Մասնակիցը նաև

հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/13» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Հովսեփյան Սուսաննա» Ֆ/Ա-ն Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հայտերը բացելուց հետո, հրաժարվելով «ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/13» ծածկագրով գնման գործընթացի հետագա մասնակցությունից, ըստ էության, հրաժարվել է ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16729-2020 գրությամբ «Հովսեփյան Սուսաննա» Ֆ/Ա-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/258 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Հովսեփյան Սուսաննա» Ֆ/Ա-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**